ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Պ. ՊՈՀՇԵԱՆՑԻ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿԸ.

Կիւրակի, մայիսի 16-ին, Թիֆլիսում կատարուեց մի համեստ գրական տօնախմբութիւն։ Այդ օրը Թիֆլիսի հայ հասարակութեան ինտելիգենտ մասը—ժողովուած Պ. Պ. Պռօշեանի համեստ յարկի տակ—տօնեց նրա գրական գործունէութեան քառասնամեակը։

Դեռ անցեալ տարուանից Թիֆլիսում պ. Պռօշեանին մի խումբ համակրողներ մի յանձնաժողով էին կազմել, որոնք պէտք է աշխատէին այդ տօնը գլուխ բերել։ Յանձնաժողովը մօտ մի տարի գործելով գլուխ էր բերել յօբելեանը։

Ժամը մէկին յօբելեարի բնակարանը արդէն լիքն էր երկու սեռի բազմութեամբ։ Ներկայ էին Թիֆլիսի քաղաքագլուխ պ. Գէորգ Եւանգուլեանը, տեղական հայ և ռուս մամուլի ներկայացուցիչներ, գրագէտներ, Ներսիսեան դպրոցի ուսուցչական խումբը իրենց տեսչի հետ և պատգամաւորներ հայաբնակ քաղաքներից ու հայկական բարեգործական հաստատութիւններից։ «Լուսամայ»-ի խմբագրութեան կողմից ներկայ էր հանդիսին և շնորհաւորեց պ. յօբելեարին մեր աշխատակից պ. Ա. Սպարապետեանը։

Ցանձնաժողովի նախագահ պ. Մ. Դօլուխանեանը, հանդէսը բանալով, կարդաց մի ուղերձ և ներկայացրեց յօբելեարին յօգուտ նորա ժողովուած մօտ 7000 ր. գումարի արժեքոմս։ Այնուհետև յանձնաժողովի քարտուղար բժշկ. պ. Բ. Նաւասարդեանը կարդաց ազգիս Վեհափառ Հայրապետի օրհնութեան սրբատառ կոնդակը, որ ժողովականները լսեցին յոտնկայս, ապա Կ. Պօլսի նախկին պատրիարք Ամեն. Ս. Իզմիրլեանի գրութիւնը, Թիֆլիսի թեմի առաջնորդ Գեր. Գէորգ արքեպիսկոպոսի շնորհաւորականը և բազմաթիւ հեռագիրներ ու շնորհաւորանքներ — ստացուած գրեթէ հայաբնակ բոլոր կենդրոններից։

Ուշագրաւ էին Մայր Աթոռի Հոգևոր Ձեմարանի ուսուցչական խմբի կողմից ուղարկուած ուղերձ — բանաստեղծութիւնը Յ. Յովհաննիսեանի — փորագրուած արծաթէ տախտակի վերայ և Ներսիսեան Դպրոցի ուսուցիչների կողմից կարդացուած ուղերձը։

Յօբելեարը, բացի յանձնաժողովի ներկայացրած 7000 ռուբլուց, ստացաւ նաև երկու գրամական ծրար հայ օրիորդների և տիկինների կողմից և բազմաթիւ այլ նուէրներ։

Հանդէսը տևեց մօտ $1^1/_2$ ժամ, որից յետոյ Թիֆլիսի քաղաքագլուխ պ. Եւանգուլեանը Հասարակութեան կողմից շնորհակալութիւն յայտնեց յանձնաժողովի անդամներին նոցա աշխատանաց համար։

Պ. Պռոշեանը զգացուած մի քանի խօսքով շնորհակալութիւն յայտնեց մասնաժողովին և ներկայ եղող հանդիսականներին, որ նոքա իւր ծերութեան հասակում չմոռացան և մխիթարեցին իրեն և ապա հրաւիրեց ամենքին մի մի բաժակ «ցուրտ ջրով» իրար կենաց վայելելու։